ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1,

№ 61/685 «18» 05 2018թ.

«ՆՅՈՒ ԻՆԴԱՍԹՐԻԶ» ՍՊԸ-Ի
ՏՆՕՐԵՆ Տ. ՎԻՐԱԲՅԱՆԻՆ
ք. Երևան, Նոր Նորք Բագրևանդի փ. 1/3, բն.39

Երևանի քաղաքապետարանի և «ՆՅՈՒ ԻՆԴԱՍԹՐԻԶ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև 16.03.2018 թվականին կնքված «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-18/16» ծածկագրով աշխատանքների գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 1.1 կետի համաձայն՝ «Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետև՝ Աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների»:

Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ «Աշխատանքը կատարվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով»:

Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ պայմանագրային պարտավորությունների կատարման ժամկետ է սահմանված՝ պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2018թ. ապրիլի 30-ը:

Տեղեկացնում եմ, որ Ընկերությունը խախտել է Պայմանագրի 1.1 և 1.2 կետերի պահանջները, այն է՝ Պայմանագրով նախատեսված ժամկետում պատվիրատուին չեն տրամադրվել նախագծա-նախահաշվային փաստաթղթերը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 347-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան.....»:

Պայմանագրի 2.1.3 կետի համաձայն՝ պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

Վերոգրյալով պայմանավորված՝ Երևանի քաղաքապետարանը, ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի հրաժարվում է Ընկերության հետ կնքված Պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն լուծված, ինչպես նաև՝ գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն՝ առաջարկում եմ Ձեզ սույն Պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ գրությունը, որը նաև օրենսդրական պահանջի համաձայն հրապարակվել է www.gnumner.am ինտերնետային կայքում, ստանալու օրվա դրությամբ վճարել Պայմանագրի 5.3 կետով հաշվարկված տուգանքը՝ 880 (ութ հարյուր ութսուն) ՀՀ դրամ, որը հարկավոր է փոխանցել ՀՀ ֆինանսների նախարարության կենտրոնական գանձապետարանի 900015211429 հաշվեհամարին:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ **Գ. ՉԹՐՅԱՆ**

Կատարող՝ Ն. Կիրակոսյան
011 514-194